ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունիսի 2026 թվականի N 909 - Ն

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԻՉՆԵՐԻ (ՆԵՐԱՌՅԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՏՈՒԿ ՆՇՈՒՄԸ), ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏՐՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել բարձրագույն կրթության մասնագիտությունների և դրանց դասիչների (ներառյալ կարգավորվող մասնագիտությունների վերաբերյալ հատուկ նշումը), դրանց համապատասխան տրվող որակավորումների ցանկը և դրանց ուսուցման ձևերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետով հաստատված բարձրագույն կրթության մասնագիտություններին (դասիչներին) և դրանց համապատասխան տրվող որակավորումներին Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշման 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության

կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 22-ի N 17-Ն հրամանով հաստատված բարձրագույն մասնագիտական կրթության և գիտական աստիճաններ շնորհելու մասնագիտությունների (նաև դասիչների) և որակավորումների համապատասխանության ցանկերը հաստատվելու են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասն ամսվա ընթացքում.

2) սույն որոշման 1-ին կետով հաստատված բարձրագույն կրթության մասնագիտությունների և դրանց համապատասխան տրվող որակավորումների ցանկի համաձայն ընդունելությունը կազմակերպվում է 2027-2028 ուսումնական տարվանից:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին» N 1191-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի սեպտեմբերի 10-ից:

5. Ներառյալ 2026-2027 ուսումնական տարին՝ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված սովորողների պարագայում մինչև ուսումնառության ավարտը շարունակելու է կիրառվել սույն որոշման 3-րդ կետով ուժը կորցրած ճանաչված որոշմամբ հաստատված ցանկը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ